


Գ Ե Ղ Ա Ր Գ Ա Յ Վ Ա Ն Ք

Հայաստանի ցանկալի եւ միանգամայն զարմանալի հնու-թիւններէն մէկն է Գեղարգայ վանքը, որ Այրիվանք ալ կըսուի, եւ երեւանէն չորս ժամի չափ հեռու՝ Գառնի

գիւղաքաղաքին քովերն է։ Այնպիսի ահաւոր ժայռերու մէջ է այս վանքին գիւղքն որ նմանը աշխարհիս մէջ խիստ քիչ տեղ կըըսուի, ու եւրոպացի ճանապարհորդներն ալ



հիանալով կպատմեն այս վանքին տեսքն ու մեծագործութիւնը, որ կարծես թէ ահագին գեանաշարժով տակնուվրայ եղած ձորի՝ մանաւանդ թէ աշխարհքի մը տխուր աւերակներուն վրայ կանգնուած խաչ մի է։ Արգարեւ Այրի վանք՝ հաղարաւոր տարիներով այրիացեալ, բայց միշտ բարեպաշտ Հայաստանին ճշգրիտ նշան եւ օրինակ։

Գեղարգայ վանքը սուրբ Լուսաւորչին հիմնած վանքերէն մէկը կկարծուի, կամ թէ

Լուսաւորչէն քիչ ժամանակ ետքը շինուած է. բայց յետոյ այլ եւ այլ ժամանակներ նորոգութիւններ եղած են վրան, եւ 1214-էն մինչեւ 1288 թուականը՝ Պոռչ անուանով մեծ իշխանը եւ յետոյ օւրիշները՝ շատ զարգարեր են վանքը նոր նոր քարակոփ մատուներով. այնպէս որ գլխաւոր տաճարէն զատ վեց եկեղեցի կամ մատուռ կայ մէջը՝ ամէնն ալ մէկմէկու կից, ուստի եօրն եկեղեցաց վանք ալ կըսուի։

Գլխաւոր եկեղեցւոյն հիւսիսային պատը միակտուր ապառաժ է՝ ահագին բարձրութեամբ, եւ այն ապառաժին վրայ փորուած է իրեք մատուռ քովէ քով, անոնց վրայ ալ ուրիշ մատուռ, աւելի ընդարձակ, մէջի ամէն կտորներն ալ, այսինքն սիւները, սեղանը, բեմը, ժայռին մէջ փորուած: Առաջին մատուռը քառակուսի է՝ ութը սանաչափ երկայնութեամբ ու լայնութեամբ, վրան գրմբեթածեւ, եւ լուսամուտը հարաւային կողմէն: Գրեթէ նոյն ձեւով են նաեւ միւս երկուքը. իսկ չորրորդին լոյսը գմբեթէն է: Ուրիշ երկու մատուռ, եւս եւ նոյն ապառաժ լեռներուն մէջ փորուած եկեղեցիներ ալ կան՝

իրարմէ գեղեցիկ ու զարմանալի ձեւերով:

Այս վանքը, որ շինուածքին կողմանէ աշխարհիս ամէն վանքերէն ալ աւելի հաստատուն պիտի լինէր, շատ անգամ խախտուած է այլ եւ այլ գետնաշարժերով, մանաւանդ 1840-ին Մասիս լեռան սասանութեամբը՝ որով Ակոռի գեղը բոլորովին կործաներ էր:

Իսկ Գեղարդայ վանք՝ ըսուելուն պատճառն այս է որ սուրբ գեղարդը, այսինքն այն տէգը՝ որով խոցեցաւ Փրկիչն մեր իկաջին, երկարատեւն այս Այրիվանք ըսուած վանքին մէջ պահուած էր. յետոյ փոխադրեցաւ Սուրբ Էջմիածնայ գանձատունը, ուր եւ կպահուի պատուով մինչեւ ցայժմ:

ՆԿԱՐԱԳԻՐ ՀԱՆԴԻՍԻ ՊԱՐԳԵՆԸՆԿԱՆՈՒԹԵԱՆ

Ս Ր Բ Ա Ջ Ա Ն Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Ն Թ Ա Դ Է Ո Ս Ի

ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՅ ՊՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ (*)

Միրզայ Սայիդ խան ոստիկանն արտաքին գործոց առ Դրան Շահին Պարսից, տեսանելով ըգտասնամեայ մեծամեծ վաստակս Սրբազան Առաջնորդին Ջուղայու ամենպատիւ Արքեպիսկոպոսին Թաղէոսի, յայտնեաց Վեհափառ Շահին Պարսից զարժանիս հաւատարիմ եւ խնամոտ սպասա-հարկութեանց նորա՝ այսու յայտարարութեամբ.

«Թաղէոս եպիսկոպոս իբրեւ իտան ամաց հետէ պարապի իտեսչութիւն եւ իվերադիտողութիւն գործոց Հայոցն Ջուղայու՝ հպատակաց սրբոյ եւ մեծի Վեհափառութեան արքայից արքայի (որում զոհ լիցի հոգի իմ): Եւ այնպէս բարւոք եւ կանոնական կառավարութեամբ իժամանակս լինելոյ իւրոյ յԱսպահան՝ արարեալ է զվարչութիւն իւր, զի զկուսակալս եւ զհոգեւորականս այնր քաղաքի, ընդ յեղանակ կառավարութեանն իւրոյ գոհս եւ ուրախս կացուցեալ է: Թուղթն զոր իմամ ջօմայն Ասպահանայ ըստ այսմ մասին գրեալ էր, իսպաս Վեհափառ Տեառն ժամանեցաւ, յորում զճառագայթս շնորհաց տէրութեանն սակս եպիսկոպոսին հայցէին: Եւ քանզի Յգոստա-

փառ Կայսրն Ռուսաց առ հոգեւորականս այսր Տէրութեան, այսինքն Թեհրանայ, Դավրիժու եւ Ասպահանայ իմամջօմայիցն նուէրս էր առաքեալ, ուստի արժան է եւ երկրածաւալ շնորհի արքայական Վեհափառութեան յանձն եպիսկոպոսին ճառագայթել: Պարգեւ երկրորդ աստիճանի սարժիփութեան ընդ համայնի, որ է նման պարգեւաց երկրորդ աստիճանի օտար տէրութեանցն, եթէ նմա շնորհեսցի՝ համապատշաճ է. քանզի իՏէրութենէն Ռուսաց եւս երկուս եւ երիս պարգեւս ունի: Վասն որոյ ծառայդ համարձակի աղերսել, զի եթէ ըստ բարեհասութեան արքայից արքայի՝ վասն եպիսկոպոսին շնորհաբաշխութիւն ինչ լինիցի, եղիցի այն նմա իոյոս խրախուսանաց: Հրաման սուրբ եւ Վեհափառ Տէրութեանդ մեծարոյ:»

Վեհափառ Շահն Պարսից բարեհասեցաւ շնորհել Սրբազան Արքեպիսկոպոսին զՋրանշան Առիւծու եւ Արեգական երկրորդ աստիճանի, որոյ հրովարտակին այս է Թարգմանութեանն պատճէն.

«Հրաման է մեծի Տէրութեանս, եթէ քանզի

(*) Սիրով կհրատարակեմք այս հանդիսին նկարագրութիւնը (զոր յուղարկեր է մեզ Ջուղայու Ամենափրկիչ վանքին մեծարգոյ Ատենադպիրը) իբրեւ ազգային ուրախական լուր, եւ միանգամայն հետաքրքրական տեղեկութիւն: